

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ և արտա աճմանի

Տարեկան 10 ֆր.

Վեցամսեայ 5 »

Արտասահմանի հա-

մար տարեկան 12 »

Վեցամսեայ 6 »

ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԵՐ

—)(—

Գրութիւնք և քննարկ

—)(—

Իրանացի սոցիալ ԶՊ ասի-

րիւն և Լոնդոն արևի սե-

զանկերու համար 20 ՕԳ

գեղջ կրչայ :

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՒՈՒԹԻ ՉՈՐԵՖՇԱՐՋՈՒՄ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

MUSSELIANUS 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

Նստակ և գրամ գրկի
Խմորագրութեան հասցիին

Редакция на ввстнннъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

ՎԵՐՋԻՆ ԶԵՎՈՅՑ

Պոլիարիոյ և արտա աճմանի մեր արդոյ բաժանորդներն և բարձրագոյն արտապրոցի իրանց բաժանորդները մեզ հարցնեն : Հակառակ պարագային ծագելիք անպատեհութեանց պատասխանաւ չէ խմորագրութեան :

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՇԱՐՋԱՆԱՆՆԵՐԸ

—)(—

Ինչպէս ամեն մի ժողովրդի, նոյնպէս և հայերիս մէջ՝ երեւացել և երեւում են հասարակական շարժումներ, այսինքն մարդիկ, որոնք ժամանակի պահանջներին յարմար գիտակներ հագնելով՝ հարստահարել են ժողովրդի ամենամոտական շրջանները լոկ իրանց փոքրերը կշտայնելու և գրպանները լեցնելու համար : Մի քանի տասնեակ տարիներ առաջ ժողովրդային այդ կարգի գերասանները մեզ հարստահարում էին եկեղեցու, գաւրոցի և զանազան բարեգործական գործերի անունով, մտնում էին մեր ժողովրդի մեծ խաւերի մէջ և սղորակի պէս՝ ձմում նրան : Վերջին ուսասանական պատերազմից յետոյ՝ երբ հայկական հարցը պաշտօնապէս գրվեց քաղաքական աշխարհի առջեւ, մաքուր հայրենասէրների հետ երեւան եկան և ազգասէր շատ շարժումները նորից ժողովրդի ներքինական զգացմունքները հարստահարելու միակ նպատակով, սակայն ժամանակը խառն էր, ժողովուրդը բոլորովին անպատրաստ մարտը ազատից, ազնիւր անազնիւից որոշելու, և այդ շարժումներին աջակցեց ժողովրդային սպասարկեան անունը ծառայեցնել իրանց ստոր հակամարտին : Բարեբախտաբար այդ երկար շրջանից, ազատութեան հասն առած հայ ժողովուրդը ընդունակ եղաւ արտադրելու մաքուր յեղափոխական տարրը, որը, բոլորովին

անձնէր կերպով նեղակող ազատութեան համար մղված կրօնի մէջ, իսկոյն նկատեց շատ շարժումներ, կարող միջոցներ ձեռք առնելով գուրս նեղակող շարժումը գործունէութեան ասպարէզից և շարունակեց իր գործը : Հին շարժումները վերաւորվեցին, կատաղեցին, բայց տեսնելով որ ժողովուրդը առանց սկանչ կատելու երկարակողմ է մաքուր տարրի ստեղծած հասանքին և ամէն մի վայրկեան պատրաստ է խոչնդոտ հանդիսացողներին արտել, լուցին կամ թէ իրանք էլ առերես հետեւեցին ժողովրդին : Մի խօսքով մեր յեղափոխութեան տուրջին, ցնցող և սղեւորող քայլերը ստիպեցին այդ շարժումներին մտնել ամենամոտական կիւնները : . . .

Ինչպէս ամեն մի յեղափոխութիւն, նոյնպէս և մերը, նախքան կատարելու յաջողութիւնը ձեռք չէր բերել, ունեցաւ և իր ձախ, անաշոյղ ու մոլթ վայրկեանները : կատաղած թշնամու աւելի զօրաւոր հակահարածը ժամանակաորակէս գետնին սեղմեց կեռ նոր ոտքի կանգնած հայ ժողովրդին, ազնիւ յեղափոխականը ստիպված եղաւ մի քիչ կանգնել, լոկ մեջէկ մոլթովրդի ոտքից բռնել, որ բոլորովին շրնկնի, կրկին ուշքի գայ և իր կոխը շարունակէ :

Այդ լուծեան վայրկեաններում՝ ծակերը մտած ծեր շարժումները գուրս թափվեցին և յուսովով օգտուելով ժողովրդի երեւակայական յոսանաւ տրամադրութիւնից՝ գոխային ճիւղարձրացրին անէճք կարգալով հայ յեղափոխականների գլխին : Հին շարժումներին միացան և այն նոր շարժումները, որոնց յեղափոխական տարրը իր միջոցով գուրս նեղակող վարակիչ միկրոբներն էին և նոր շարժումները ձեռք առնով վստակելին, թրքամու ազանքին գիտային պար բռնած շրջադասեցին այն խարոյկը, որի վրա դրել են հայ յեղափոխութեան ուրազի ըր :

Պարի շղթան սկսում է Սեւ ծովի ափերից և հասնում մինչև Ասիան : Եւրոպայի յարաբար խնեւր են ծերուկ շարժումները իրանց երիտասարդ վեղարաւոր և անվեցար բնկերներով : . բայց ցնորք : Հայկական մարմնացած յեղափոխութիւնը չի այրվի ոչ մի կրակից : նախքը կրակով է սկսում, աշխարհը ամբողջովին հրդեհելու և հինն ու փոսածը այրելու համար, երբ նա բոցավառվի այն ժամանակ վա՛յ մեր հին և նոր շարժումներին . . .

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԹԻՆՉՈՒՆ ԱՆԳՍՏ ԵՂԱՅ ԳՈՐԾԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. Ես գործակցական բնկերութեան մը անգամ եմ, վասն զի փոսահ եմ թէ անոր «պացային ետին կայնած են այնպիսի մարդիկ, որոնք ու է շահ շունին իմ ծախքերէս հարստանալու մէջ : Արդարեւ՝ պատասխար վաճառականներ ալ կան, բայց ատիկայ անոնց կոնակին վրայ գործումած չէ, ինչպէս օրինակի համար՝ արծաթեայ սպասնիքում «այար»ը : Մարդ չի կրնար հսկել ոչ անոնց վաճառանոցներու վրայ և ոչ ալ աչքէ անցնել անոնց տոմարները : Ձեռք գիտեր թէ ինչ խարդախութիւն կայ իրենց այն ապրանքներուն մէջ, որոնք մեզ իբր ուտեստ կը ծառայեն : Մեր շահը կը պահանջէ որ ունենանք միջերանոց մը՝ ուր ամէն բանի վրայ կարենանք հսկել և ուր ամէն բան գտնուի : անոնք որ կը ծախեն և անոնք որ կը գնեն՝ ունենան միկնոյն շահերը :

Բ. Սակայն, պիտի առարկեն ոմանք, եթէ քաղաքացիք երբեմն խարուած են իրենց զնամ ապրանքի շարի կամ տեսակի մասին, պատճառն այն է որ անոնք ստան կուզեն և կանոնաւոր չեն վճարեր : Եթէ միշտ կանխիկ միշտ միկնոյն նպարա-

վաճառէն գնէին՝ չպիտի խարուէին : Այո՛, կարելի է, բայց ան առեւն ալ վաճառականը պիտի հարստանար իմ կոնակէս : Ես այդքան հարուստ չեմ, որ այդ տեսակ «լուքս» մը ներեմ ինծի : Ես կը սիրեմ լաւ ապրիլ առանց միջոցներու : ներածէն աւելի սուղ վճարելու :

Այդ ծառայութիւնը կը մատուցանէ ինծի գործակցական միջերանոցը : Հոն ուրիշ տեղէ աւելի չեմ վճարեր և երբ հաշիւ կը տեսնենք՝ կը մնայ ինծի նաև շահ մը, որ կը ծառայեցնէ իմ փոքրիկ գրամագրութիւնս : Է՛հ լաւ, անկեղծօրէն խօսինք : Ես չեմ հասկնար թէ ինչու էս ինծի չը պահեմ այդ շահը, ի հարկին անձիւն օգնելու համար, փոխանակ վաճառականները հարստացնելու :

Գ. Իբրեւ անգամ ընկերութեան տիպուած եմ խնայողութիւններ ընել և կը շահիմ այնպէս՝ ինչպէս պէտք է : կը խնայեմ ծախսելով և ոչ անձն զրրկելով : Երբեմն մարդ իր միտքը կը յոգնեցնէ թէ ինչպէ՞ս ընէ՝ որ քանի մը օանթիմ անտեղէ լաւ բան է այդ, բայց շատ տաղակալի : Եւ յետոյ մեր ընկերները մեզ կը ծագրեն կամ կը կոչեն կծծի, — յատկութիւն մը, որ շատ ալ յանձնարարելի չէ : Գործակցական ընկերութիւնը կը կանոնաւորէ այդ ամէնը, նա իմ կըցածէս աւելի լաւ կը խնայէ ինծի համար : մէկ կողմ կը գնէ ոչ միայն արծաթ գրամներս, հապա նաև պղինձներս ու «տագաթ»ներս : Եւ ես կըստանամ գումար մը ամբողջ, կամ ընկերութեան քով կը թողում գայն, ուր պիտի բերեն միկնոյն շահերը, ինչ որ պիտի յաւային եթէ ու է ինչպիսիան սնտուկի մէջ գրուած ըլլայի : Իւրաքանչիւր վեցամիսը անգամ մը ուրիշ գործակիցներու հետ ժողովի ներկայ գտնուելով կը խորհիմ մեր եկամուտներու ընդլայնումի մասին և տեսնապիտական ճիւղի մէջ աւելի կարելու որ անձերու խօսածը լսելով գոնէ բան մը կը սովորիմ : ով պիտէ

ի՞նչ կրնայ պատահել :

Գ. Չորրորդ պատճառը այն է որ գործակցական գրութիւնը կը սորվեցնէ ինծի՝ հոգայ նաև ուրիշներու մասին : Ատիկայ անհրաժեշտ դաս մըն է մեզ համար՝ եթէ կուզենք մեր կեանքը երջանկացնել : Աւրիշին համար խորհիւր՝ կեանքին յարաբերութիւնները հեշտալի կընծայէ, առանցքին վրայ իւզ կը լեցնենք որ անիւր աւելի հեշտորէն գառնայ : Միասին կը ջանանք թէ ինչպէ՞ս աւելի լաւ շտկենք մեր մթերանոցը, խորհուրդներ կընտրենք, ժողովներ կը գումարենք, ստէպ կը կը հանդիպինք իրարու միւս քեր փոխանակելու համար և այդ բոլորը չէ՞ որ գերազոյն միջոցներ են իրար գնահատելու և ճանչնալու համար : Այդ համախմբումները, ուր խնդրոյ առարկայ եղողը հասարակաց շահն է, կապացուցանեն թէ որքան օգտակար բան է համբարախմբութիւնը :

Ե. Եթէ ինծի հարցնէք՝ քաղաքացիները պէտք եղած ընկերական դիրքի բարձրացնելու միակ գործնական միջոցն է սպառող գործակցութիւնը : Հաշարաւոր վաճառականներ, ջուղեթ, վախառուներ յաջողեցան մեզմէ օգտուիլ իրենց կողմը հիւսելու համար, ինչո՞ւ մենք ալ չը գիտնանք քիչ մը շունչ առնուլ՝ մեզ համար պահելով մեր գործին և առուծախին շահերը :

Ընկերութիւնը դեռ շատ բաներու պիտի վարժեցնէ մեզ և յարմարութիւններ պիտի տայ յետոյ նաև արտագրող ընկերութիւններ կազմակերպելու : մենք պիտի ըլլանք մեր տէրը և կամ թէ կարող պիտի ըլլանք մշակել նաև շահակցական գրութիւնը : Ժողովներով, ընթերցումով, խորհրդակցութիւններով կարող ենք ուսումնասիրել այն ամէն խնդիր, որ մեզ կը զբաղեցնէ : Անք լաւ պիտի հասկնանք ի-

րար և պիտի հետաքրքրուինք քաղաքացիին բազում, և ուր յարապարակութեամբ միութենէն պիտի առաջանայ բարօրութիւն և գէպի իր ընկերը վեհանձնութիւն :

Ահա այն հինգ պատճառները որոնք կը տալին մարդը անգամ ըլլալ գործակցական ընկերութեան : Լաւ թափանձեցէք անոնց մէջ և եթէ դեռ անգամ գրուած չէք մեր գործակցական ընկերութեան, վստահ եմ որ պիտի համոզուիք ու գրուիք :

Թարգմ. ՏԻԿՐՍԻ ԱՃԷՄԵԱ :


ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Այլովիւն, 20 Դեկտ.

Կը ցաւիմ ըսելու, որ այս տարի մեր հոգաբարձութեան անգամներուն վրայ շատ նուազ եռանդ կայ դպրոցը առաջացնելու քան անցեալ տարիներ : Տիկնանց խնամակալութիւնը սր առկէց առաջ այնքան օգտակար եղած էր աղջկանց վարժարանին, այս տարի բոլորովին դադարեցած է իր գործունէութիւնը : Անցան այն օրերը ուր մեր աղջիկները այս ու կիկներուն շնորհիւ, այնքան յառաջդիմութիւն կընէին ձեռագործներու և տու հասարակ իրական սեռի դաստիարակութեան իրերուն մէջ : Այժմ ոչ միայն այդ օգտակար ճիգերը առաջ չեն տարուիր, այլ նաև փոշի իրաւերու տակ մնալու դաստիարակութեան անցեալ տարուած են անցեալ տարուած ձեռագործները որոնք վիճակահանութեան գրուած էին :

Փափաքելի է որ այս վճատութեան, ու ժաթափութեան պատճառները քննուին և սիրտերը նորէն ջերմանան մեր դպրոցներուն շուրջը :

Ա.



ԿՐԷՏԻ ԴՐՈՇԱԿ

Աթլէնքի լրագիրները յոյժ շահեկան անդեկութիւններ կուտան կրէտէի գրօշակի խնդրին վերջնական լուծման մասին : Խնդիր մը որ քիչ էր մնացել որ ամէն կարգադրութիւն տակն ու վրայ ընէր :

Յայտնի է թէ կրէտացիները, իրենց ազգային ինքնօրէնութիւնը հաշակուելուն պէս, իրենց ազգային գրօշ ընտրած էին յունական գրօշին գոյները, մէջտեղը մեծակալ խաչով մը որ սուգի նշանն էր, իրենց ազգասիրական բաղձանքին (Յունաստանի հետ միանալու) ամբողջապէս չիրականացնուին համար : Բայց ծովակալները հասկցուցին կրէտէի Ազգային Ժողովի Գործադիր մարմինին թէ կրէտի թուրք սիրապետութիւնն ազատելէն ետքը, աւելորդ բան մը կը գառնար այն, եւ խաչը, եւ թէ պէտք էր գայն փոխանակել կարմիր կամ սպիտակ խաչով մը : Պ. Սֆորիանաքիս այս առաջարկը Աթլէնք զրկեց գրօշակի երէք նոր նմաններով խնդրելով Ենոքիոս լիխանէն որ ընտրութիւն մը ընէ տնտես մէջէն : Ինչպէս երեքն ալ մէկ կողմ թողլով նոր գրօշակ մը պատարասեց, միշտ յունական գոյներով և կարմիր-թրքական գոյներով և գայն-քասակուսով մը որուն մէջտեղը կարմիր խաչ մը կը կենար : Եւ այս գրօշակը կրէտէ զրկեց : Ծովակալները առանց առարկութիւն մը հանելու վաւերացուցին զայն :

Բայց Սուլթանը խնայելով թէ կարմիր քասակուսին սպիտակ խաչ կը կրէր, այս խաչին ջնդուած և թրքական մահիկին և և ստողին հետ փոխանակուիլը պահանջեց : այսինքն նոյն իւրիքական գրօշակը : Պետութիւնները արամադիր կերեւէին այս փոփոխութիւնը ընդունելու, բայց Ենոքիոս թաղաւորը և կրէտացիները մերժեցին և թաղաւորը յայտարարեց թէ իր սրդին այս սեռակ գրօշակով մը չէր կրնար կրէտէ երթալ :

Գալով կրէտացիներուն, բոլորովին կատուցան իմանալով թէ իրենց ազգային գրօշակը մահիկ և սպիտակ կրէր, այսինքն անցեալի գիտութեան նշանը, և յայտարարեցին ծովակալներուն թէ մահիկին ընդունուիլը իրենց պայմաններուն հակասակ էր, և թէ այն կրէտացիները որոնք զէնքերը չէին յանձնած, պիտի շա-

րունդեն պահել զանոնք, սպասելով զէպքերուն :

Այն ատեն պետութիւնները միջամեցին, եւ, թէ կրէտացիները, թէ Սուլթանը գոհացնելու համար, մահիկը ջնջելով միայն ստողը պահեցին :

ԵՐԿՈՒ ՊԶՏԻԿ ԽՆԴԻՐՆԵՐ

Այս պահուս մեր գրասեղանը խնդուած է մէկէ աւելի նամակներով, սրտեք, երկու խնդիրներ յուսարանել կը նկատին : մէկը՝ Բարիկի Ակուսիւն և Միութեան վէճը, և միւսը՝ Ռուսչոքի համբաւաւոր մեծամարտը :

Պ. Սապահ-Գիւլիան նամակով մը կը բացատրէ թէ արդարեւ ինք զատի ենթարկուած է. բայց չէ թէ աշակերտի մը համար, այլ մասնաւորի մը, ոչ-գործակալի մը համար, որ յանդուրձութիւն ունեցած էր դպրոցի մէջ իր վրան յարձակում գործելու : Բայց չի բացատրէ թէ ի՞նչ պատճառով անդի ունեցած է այդ ցաւալի միջոցակը : Անցնելով Արևելքի թրքական խնդրին, Պ. Սապահ-Գիւլեան խոստի կը քննադատէ անոր և անոր վկային հակապետական ընթացքը, և կը հերքէ թէ ստիկանապետին առջեւ ուրացած ըլլայ թղթակիցը մեծամարտի հրախրած ըլլալը :

Այս բացատրութիւնը տալով, մեր էջերուն համար փակ կը համարենք մեծամարտի այդ անձնական խնդիրը, որ հասարակական սեռակետով, միայն լուսնալուսն հետարքորութիւն ունի : Արդարեւ շատ ցաւալի երեւոյթ մը կը ըլլայ, եթէ միջնադարեան այդ սպիտակաւ սոյլութիւնը մեր մէջ արմատ բռնէ, այն ալ կրթութեան նուիրում անձերու ձեռքով :

Մենք Պ. Սապահ-Գիւլեանի հակառակորդներուն ազատ ստպարէզ տուած էինք իրենց կարծիքը յայտնելու : Ռուսչոքի գործնակներուն մասին : Միշտեւ հիմա ձայն հանող չեղաւ : Բայց հիմա չենք գիտեր թէ այդ լուսնալուսն, քննադատի բան մը չդրոնուելուն արդիւնքն է, թէ երկու վկայներ ընդունելու անպատեհութենէ զերծ մնալու միջոց :

Բարիկի խնդրին մասին մեզ գրողն է Պ. Յովհաննէս Եւաւարչ, ուսանող գրակաւութեան և փիլիսոփա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (8)

ՀԱՅԻ ԳԻՆ

ՔԱՂԹԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻ

Փե.

Առաւօտ է, թանձր մշուշ մը կը ծանրանայ քաղաքին վրայ, արևը հորիզոնէն նոր վեր ելած, համատարած մարմաշին վրայ, իր ճառագայթներուն արծաթը կը հալեցնէ :

Բաղաւքը ատ խոնաւ անտուան մէջ դեռ կը պահէ իր գիշերուան անշարժութիւնը, քանի որ բանուորներու խանութիւններ միայն կայտարան իրենց գործատելին, ու քանի որն ալ բանջորտաձառներ փողոցները կը շափշփեն, մշուշին մէջ արծաթիկով իրենց կերկերուն կոչերը :

Քաղաքին արևմտեան կողմը,

հրապարակին եղերքը, ճոն, ուր գաղթականութեան յատկացուած չէնքը, իր ցած ու մոխրագոյն բազուկները կերկնցնէ, ընդհանուր դասարկութիւն ու լուսնի կը տիրէ :

Բայց հրապարակին բոլոր ծայրերէն, հեռագծեւ մարդկային ստուերներ մուշին մէջէն կը յառաջանան և գէպի չէնքին մեծ դուռը կը գլմեն : Գողթականներ են ասոնք, էրկի մարդ, կնիկ մարդ, ծեր, տղայ մանչ, աղջիկ, ամենքն ալ ցնցոտիներ հազած, անութնուն տակ դասարկ պարկ մը սղմած կուրտն իրենց յատկացուած նպաստը ընդունելու :

Շէնքին ներքը, մեծ բակին մէջ բաւական ոչեւորութիւն մը կայ, ստորիքոս, մանկամարդ կիներ, աղջիկներ, քունթաթախ գէմքերով, թափած մազերով, ալյազան տարակներով, նրբանցներէն, սրահներէն, դուռներէն կը մտնեն կելլեն :

Մէկը կերակուրի սան մը կրակին վրայ գրած ապուր կեփէ, ուրիշ մը սիկար մը բերանը և սրճեփ մը ձեռքը, անկիւն մը կը փնտռէ իր սուրճը եփելու, ուրիշ մը պատի մը տակ աշտ մը գրած իր սղտիկներուն աղտոտները կը լուսայ : վերջապէս մեծ ու փոքր ամենքն ալ իրենց ստոտան զբաղումներն ունին :

Յանկարծ լաթ լուացող կիներ, դուրսէն ներս մտնող կնկան մը երեսոյթէն զարմացած, ձեռք ձեռքի գործը, և քանի մը վայրկեան զանի գիտելէն ետքը ուղղակի սուրճ եփող կնկան մօտ վազեց, և անոր ախտն ջին բաներ մը խօսել սխաւ, մատով նորիկ կիներ ցուցնելով :

Այս միջոցին միւս կիներն ալ իրենց գործերը ձյլցին և անոնց մօտ եկան հաւաքուեցան : Ունկնդիրներէն մէկը. —Քա՛, իրաւ ան է բաւ, ինքն ալ նորիկը մասնախիշ ընելով : —Ո՞վ նախըմ, պտոսց սուրճ կփող

կիւնը, որ 50նոց մէկերս մըն էր, և քիչ մը նեղացած սուրճին դեռ չեփելէն :

—Չե՞ս գիտեր, պտոսախանեց լաթ լուացող կիւնը, սա Աստղիկը, ան որ նախըմ մը կրմամէր սէ, սօճուա աղաները առին տարին ասկէ :

—Եա՛, կրէտէն ֆի, ասելուց ուրիշ մը, մարդ գտեր է եղեր, վրան նայիս նե, անօթի սասկած չուն զարձեր է :

—Ա՛խ ատանկներն կուռնագ կրլան, ձեռքի տակէ ամէն բան կընեն, երեսանց արգար կերեան :

—Ես քեզի պան մը ըսեմ, պտոսախանեց մեկերան, որ սուրճը եփած և քանի մը ու մղով խմած էր, հիմա կերթած միջանուրան կը բերեմ, և բապառնիքը ձեռքը ասկէ կը վնասեմ : Ատանկներուն համար չէ՞ ֆի մեր երեսն ալ չեն նայիր, և մեր նախաւոր փարայի մը եղաւ :

—Ճանախ, նայիւր նորին ոտքի կը հանես, հե՛ւ ո՞վ գիտէ նորէն քստաք

յութեան : Պ. Շաւարշ ձայնակցելով Յ. Տ. ի գրածներուն , բոլորովին կը հերքէ Ա. Գ. ի նամակը զոր վերջերս հրատարակած էինք Շարժումի մէջ : Սիրով կը հրատարակէինք այդ բանըն նամակները , եթէ համոզուած չըլլայինք թէ այդ հրատարակութիւնները , իրենց զայրագին սենց գատելով , փոխանակ անհամաձայնութիւնները հարթելու , ա՛յլ աւելի հպիտի սրէին կիրքերը եւ չպիտի լայնցնէին Ակումբի եւ Միութեան մէջ բացուած խրամբ : Ինչպէս կերեւայ , այս երկու մարմինները իրենց մէջ գտնուած կարգ մը անհամաձայնութիւններու արտաբերութիւնը կը ստեղծեն Այսպէս Յ. Տ. վերջին նամակով մը կը հաստատէ թէ Պ. Ա. թ. (ն՝՞՞ է , չենք գիտեր) եղեր է սուները պատուը . եւ Ակումբի հասցէին անպատկառ նամակները դրկողք . եւ այլն :

Մենք կը կարծենք որ աւելի լաւ է այդ մանր խնդիրները ա՛յլ չի գրգռել : Թո՛ղ Ակումբը եւ Միութիւնը իրենց ուրոյն գործունէութեան անձնատուր ըլլան :

Գործը շուտ կը մտցնէ այդ կարգի անհամաձայնութիւնները . եւ ատարակոյս չի կայ թէ Բարիքի հայ ուսանողներէն որոնք այս երկու անձնատուր միւսները նոյն նպատակով , ազգին օգտակար ըլլալու նպատակով գործելով , օր մը , ուզեն չուզեն նոյն ուղիին վրայ , քովէ քով պիտի դառնան զիրար . եւ միասին պիտի խնդան այսօրու անսկզբի վեճերուն վրայ :

ԱՂԵՔԱՆԴՐՈՅՑ ՄԱՏԵՆԱԴՄԱՐԱՆԸ

Աղեքանդրիոյ մէջ անցեալ մարտին հաստատուած հայկական մատենադարանը կը յարատեւէ իր նպատակը իրագործելու ճամբուն մէջ :

Այդ մատենադարանը «սահմանուած է ընդհանուր շտեմարան մը ըլլալ այն ամէն հրատարակութեանց , ինչ լեզուով ալ ըլլան , սրտնք կը վերարկերին հայոց ազգի » և երկրի իրերուն » :

Մատենադարանը արդէն ձեռնարկած ըլլալով վերջին տարիներու հրատարակութեանց հաւաքման , այժմ , ամբողջական Գրադուպակ մը պատրաստելու

Կուսնեան :

— Ինձի իստեղծի Սուրբիկ հանրմ կըսեն զիտէք . պոսայ մեզերան , ուքի ելլելով . եւ իր շոր հասակը շակելով . ես մարդէ փեռովա չուսիմ :

Մեզերան սկսաւ յատաձանալ . միւսներն ալ անոր հետեւեցան :

Եկողը իրաւ Աստղիկն էր : Առտուան դէմ քիչ մը մրտիւմ ու արթնցած էր խնամակալութեանն օգնութիւն խնդրելու : Գեո գրասենեակը բաց չէր , Աստղիկ , բոլորաբար ուշադրութիւն չի գործնելով , պատին սակը կը կուսեցաւ . եւ երեսը ձեռքերուն մէջ առաւ :

Կանացի խումբը մտնեցաւ . Սուրբիկ հանրմ Աստղիկի քով կեցաւ . եւ կամայ մը անոր ուսին զոյնալով ըսաւ .

— Բա՛ , բարի ես եկեր Աստղիկ հանրմ .

Աստղիկ վեր առաւ զլուխը , եւ

պէտքը կը տեսնէ , իր պրպտումները առաջ առնելու համար : Բարիքի , յատուկ շրջաբերականով մը դիմում ըրած է ըրողը ձեռքնահաս անձերու , բանասէրներու , որ հաճին իրենց սեղեկութիւնները եւ մտածուար ծանօթութիւնները հայորդեղ մասունագործի խնամակալութեան , զի իրացնելու համար սոյն Գրադուպակին պատրաստութիւնը :

ՔՐՈՆԻԿ

Բարիքի հայ ուսանողաց Ակումբը գրական և գիտական երկերովները կազմակերպած է ուրանր տեղի պիտի ունենան ամէն շաբաթ իրիկուն :

— Ամստիւտէն Լը գրեն թէ ըստման զերմանացիները հայ ազգիկներու հետ ամուսնացած են այդ քաղաքին մէջ , և թէ իրենց ող իկները ամուսնացուցած են հայ երիտասարդներու հետ :

— Բարիքի հայ ուսանողաց միութեան ղրկածը , աչքի առաջ ունենալով Արովեանի յիսնամեակի հանդէսին մէջ Պ. Միհրդատեանցի արտասանած անխորհուրդ խոսքերը , յայտարարած է թէ ինք՝ Միութիւնը , խօսելու կատարելալ պատուութիւն կը թողու ընտանախօսներու և հետեւաբար անոնց յայտնած զազափարիներուն պատասխանատուութիւնը չի ստանձներ :

— Տատեան Արթին փաշան առաջին կարգի ակնակուռ մէծ ճիւղէի պատուանշան ստացեր է :

— Փար ա՛՛ Մլէքսանտրի մէջ կը կարդանք թէ կրէտէի ազատման առթիւ տեղւոյն յոյն զաղթականութեան տուած շքեղ հանդէսին մէջ , Հայ Յ. Գաշնակցութեան անդամներէն մէկը խնդակցական և շնորհաւորական ուղերձ մը կարդացեր է , որ լատաղոյն սպաւորութիւնը թողուցեր է հանդիսականներու

ինքզինքը սպառնալից , հեղնոտ դէմքերէ պաշարուած տեսնելով վտանգ լեզուն կայուեցաւ :

— Սարուն հանել ըսարի ևս եկեր չըսինք մի ևս , աւելցուց մեզերան ձայնը աւելի բարձրացնելով , առաջի փխրուրիւն կը ըսէր , մոռցա՛ր , հո՛ս օրերով , շարաթներով մէկ ըստի մէջ ապրեցանք : մէկ հաց կերանք : Կանանց խումբը հեղհեղեղ կը ստուարանար . Սուրբիկի ձայնն բոլոր անկիւններէն զուր թափեցան սրիչներ ալ : Աստղիկ առ սպառնացող , առման արտայայտութիւններէն ինքզինքը մոռցած էր , բայց քաջութիւն ունեցաւ ըսելու .

— Ի՞նչ կու գիտէ ինձմէ .

— Օ՛ , բան մը չենք ուզեր հայ խարբըղ կը արքայները . առանկ մեզ մտնալ կը ըստ մի , ելար գացիր , օր մը օրանց տեսութեան չե՛լար :

— Ի՞նչ ընեմ . պատասխանեց Աստղիկ . երկու մտադու զատակ ունիմ , չեմ կրնար անտէք մինակ ձգել :

վրայ : — Բարիքի Արեւելեան կենդանի լեզուաց վարժարանին հայերէնի ուսուցիչ Պ. Բարիքն , հայոց պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան դասեր սկսած է ապլ նոյն վարժարանին մէջ : Առաջին դասախօսութիւնը տեղի ունեցեր է ամսոյ 12 ին , որուն ներայ գտնուէր են նաև Ֆրանսացի ականաւոր անձնաւորութիւններ :

— Բազմազգի մէջ կը կարդանք . (այս օրերս Լոսանոնի մէջ) կը հաստատուի «հայ գործաւորներու և ուսանողներու միութիւն» որուն նպատակն է հայ գործաւորներու և ուսանողներու մէջ միութիւն մը հաստատել և անոնց համար կրթական և ինքնազարգացման միջավայր առաջացնել , միասին խորհրդակցելու և ազգային ու ընկերական նիւթերու վրայ մտքեր փոխանակելու համար : Պիտի ունենայ զրազարան մը և պիտի կատարէ երկերթիւնը , հանդէսներ , դասախօսութիւններ և այլն :

— Լ՛ԱՍՄԵՆԻՒՄԻ մէջ կը կարդանք թէ Բարիքի Լիսէ ա՛՛Սուլեանի դասախօսներէն մը՝ Արեւելեան խնդրին վրայ գիրք մը հրատարակեր է , որուն մէջ մեծ համակրութեամբ խօսած է հայոց մասին : Այդ գրքին մէջ երկարօրէն խօսուած է հայոց տառապանքներուն և հայկական ինդրին առած տարբեր երեւոյթներուն վրայ :

— Նոյն թերթին մէջ կը կարդանք թէ հայտէր Օր. Փանն Բիթէր , ապետուհի Մէլիզիւնի արքայական շքանշանին և աշխատակցուհի բարիչեան շատ մը թերթերու , «Պալ . նիք Լուսինեան Գլեակի» անուն շահեկան և հմտալից երկ մը յորինած է , նուիրուած Բարձր-Լուսինեան իշխանի անուն : Համակրիկի հեղինակուհին այս առթիւ Ն. Ա. Բարձրութեան զրական գործունէութիւնը ներքոյնով , կը թուէ

— Է՛ մարդտ ինտա՛ր է .

— Ի՞նչ մարդ .

— Վա՛յ ձիւները զլիտու . զանիչ չենք գիտեր հա մարդ ունենալ , ինքը տեսնաս , ի՞նչ կայ , կիճն ես :

— Ես ստանի բան չեմ գիտեր ըսաւ Աստղիկ , որ քիչ քիչ կը սկսէր հասկնալ լսածները , եւ ամօթէն կարմրած երեսը ծածկեց :

— Չե՛ս գիտեր մի , սալի քրեալիս հասկցո՛ր , հէ՛մ ունեցածք մէկ հասալ չէ . քեզի պէսները օրը տար հասկր փոխեն : Գա՛ առ ի՞նչ սուտք է իր ելեր նորէն մինչև հոս եկեր ևս , չըլլա՛յ իր սա մեր կերած պատառ մը հացին ալ աչք անկած ըլլաս :

Աստղիկ զլուխը միտ ծածկած կուտր . իսկ մէկըրան , ալ աւելի ուժով ձայնով մը կը պոսար .

— Լա՛ց պէ հէ . . . լաց ամա քիզ ճիհեճեճեճեճ եղիր գնա , բկկց ձեռքս իսպաւ մը չըլած . առակ կեցողները նախաւ ունին :

Ու ձեռքովը հրեց Աստղիկը :

մինչև հիմա հրապարակ ելած գործերը , որոնք ինքնին ճոխ մատենադարան մը կրնան յօրինել :

Թ. ՅՏՐՈՒՆ

Վաղը գիշեր թատերական ներկայացում մը պիտի արուի Անկէլ Սլավոֆի սրահին մէջ ի նպաստ տիկին Ֆասուլեանեանի : Ներկայացուցուելիք խաղն է Բէլլաչէզ վասիլթիւնալիսի կամ Եկչիլ ճրգտան , զոր պատրաստած է Տ. Արթին Չէքի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ՄԱՆԹՈՒՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Երբէք Մակեթոնիոյ մէջ ապրող ցեղերուն և աղգարնակութեանց կուրները հիմակուան չափ սուր բնութիւն մը ունեցած չէին : Անգլիական հիւպատոսները միաբերան յայտարարած են իրենց կառավարութեան թէ կրէտական խնդիրը անգամ մը լուծուած՝ մակեթոնական խնդիրը կը բանար իր ետեւէն :

Բոլոր աղգերու ներկայացուցիչները անձկութեան մէջ են , բացի պուլկարներէն , որոնք վրաստահութեամբ կը սպասեն պայթումին , և երբեմն չեն յաջողի կատարելապէս սքողելու իրենց ներքին գոհունակութիւնը :

Արդարեւ պուլկարական շարժման Մակեթոնիոյ պարագլուխները կը նկատեն թէ անհնարին է որ Ռուսիա աւելի երկար առան ուշացնէ մակեթոնական խնդրին լուծումը : Այժմ աւրաստիսէր և պապական գաղափարներու ծաւալումը մեծ յաջողութիւն կը գանայ այդ երկրին մէջ , որ այս ընթացքով կորսուած պիտի ըլլայ , Չարին աղգեցութեան սակ սլավական բոլոր երկիրներու միութեան ծրագրին համար :

Պուլկար պետական անձերը հա-

— Մեղք եմ , զաւակներ ունիմ . ողորմուկ ձայնով մը կանչեց Աստղիկը . զատակներս հիւստիդ են , առնօթի են , կը մեռնին :

— Կանուխէն թող մտմտայիր տէ անոնց արիւնը չի մտնայիր : Ան հացը կը պակսէր , Ան ջուրը , հատէ կորսուէ սրկեց .

Աստղիկ չէր շարժէր .

— Հայտէ սրբի փառեցէ՛ք , գորոս ըրէ՛ք , ունաց մէզերան , իր բոլորաբար եղողներուն , ու թերեւս հրամանը գործադրէին եթէ ուրիշ կողմէ ձայն մը չելլէր .

— Կու գան կոր :

Աս վերջին ազապակին վրայ , կանացի խումբը վայրկեանի մը մէջ ցրուեցաւ , մէկը տաչար առած հետեւ անկիւն մը գնաց , ուրիշ մը կերակուրին պնակը ածապարանքով պահեց , վերջապէս ամէնքն ալ մէկ մէկ ծակ մտան :

ՎԱՀԱՆ ՍԱՆՈՒՎԷԼԵԱՆ
(Շարունակելի)

մոզուած են նաև թէ նոյն իսկ
եթէ Ռուսիա սպասէ, Պուլկարիան
երբէք չի պիտի ունենայ այդ
համբերութիւնը. սրովհետեւ յոյն
տարրը Անգլիոյ՝ և սերպ տարրը
Աւստրիոյ աշակցութեամբ ա-
ռաջ պիտի երթան և պիտի ար-
գելին Մակեթոնիոյ կցումը Պուլ-
կարիայի:

Կրէտէի խնդրին յաջողութե-
նէն ի վեր հելլէններու քաղա-
քական և բարոյական ազդեցու-
թիւնը զգալապէս աւելցած է
Մակեթոնիոյ մէջ, և այդ եր-
կիրներուն Պուլկարիոյ միանալ-
ու տհաճութիւնը օրէ օր կը շեշ-
տուի:

Սերպիական խորտումն ալ յա-
րաճուն վիճակ մը ունի: Սեր-
պերը գալորցներ բացած են Օր-
բիտաի, Վալէսի, Մանասդրի և
ուրիշ քսանի չափ քաղաքներու
մէջ:

Միւս կողմէ Ռուսիա կը պաշտ-
պանէ պուլկարներու կատէ Սեր-
պիոյ Միւսն թաղասրբ: Ուրեմն
Աւստրիան է որ սերպիական ջան-
քերուն ուժ կուտայ: այնպէս որ
Մակեթոնիոյ մէջ սերպ և պուլ-
կարական կռիւր, իրականին մէջ
պարզապէս Աւստրո-Ռուսական
կռիւ մըն է:

Հիմա աներկբայելի է թէ Գեր-
տինանա իշխանը Բեթերսպուրկ
երթալու նախընթաց օրը սե-
սակցութիւն մը ունեցած է զօ-
րավար Նիքոլաէվի հետ, որ Մա-
կեթոնական կեդրոնական կոմի-
տէին նախագահն է. ինչպէս
նաև Իսկիւպի պուլկարական
գործակատարին հետ: Ամենքն
ալ մէկ կարծիք մը միայն յայտ-
նած են. այսինքն թէ՛ կորսնցնե-
լու ժամանակ չի կար:

Այսու հանդերձ Ռուսիոյ պա-
տասխանը վհատեցուցիչ եղաւ:
Չարը կը փափագէր որ շարժումը
յետաճգուէր մինչև այն վայր-
կանին երբ ինք տար նշանը.
Իսկ եթէ պուլկարները կանխէին,
այն ատեն պարտութեան մը պա-
րագային, բոլոր հեռուանքները
կրելու պարտաւոր պիտի ըլլա-
յին:

Չարը կը յարէր որ եթէ Պուլ-
կարիա սպասէր և զինքը առաջ-
նորդելու հողը Ռուսիոյ թողոր,
այն ատեն կերպիտարորէր ի-
րեն համար Մակեթոնիոյ կցումը,
իզնատիէֆ զօրավարին դժած
սահմաններուն համաձայն:

Ձերտինանա իշխանը պատուոյ
խօսք տուաւ չի գործիլու առանց
Ռուսիոյ հաւանութեան:

Իր խօսքը բռնեց և պաշտօնա-
կան Պուլկարիան հանդարտ պի-
տի մնայ այս ձմեռ և հաւանաբար
գարնան մէկ մասը: Բայց Մա-
կեթոնիոյ մէջ կազմակերպուած
խլրատմը անհամբերութեամբ ը-
բարտիւ է. Հազարաւոր զիւզացի-
ներ սրոնք տարեկան բաժին մը
կուտան Մակեթոնական կոմիտէ-
ներու, անհամբեր են գործի
սկսելու:

Հիմա խնդրը սա է թէ՛ Գեր-
տինանա իշխանը և իր կտտովա-
րութիւնը պիտի կրնան Պուլ-
կարիոյ և Մակեթոնիոյ հայրե-
նասէրներուն եւանդը զսպել, և
ս'րքան ստեղծուան համար:

Ատեն շահելու համար պիտի
առաջարկուի պեռութեանց զի-
մել, Մակեթոնիոյ համար ինք-
նավարութիւն և քրիստոնեայկա-
ռավարիչ մը խնդրելու. բայց
թուրքիան երբէք չի պիտի հա-
ւանի ձեռքէ հանել Մակեթոնեան
ինչպէս կորսնցուց կրէտէն: Նա-
խամեծար պիտի սեպէ յուսա-
հատ պատերազմ մը մղել նոյն
իսկ ամբողջ Եւրոպայի դէմ: Նը-
կար ատեն է որ այդ պատահա-
կանութեան կը պատրաստուի:
Մակեթոնիոյ մէջ ճշմարիտ բա-
նակ մը կը պահէ: Հին թնդա-
նօթները նորերով փոխանակուած
են, և Սուլթանը մինչև ատու-
ճան մը իր մտերմին վիճէլով ի-
վրայ ալ կրնայ փոստհիլ:

Լա Բարի

Կ Ի Լ Տ Է

Պ. Քուստուրազիս որ 1895էն
ի վեր կրէտական ապստամբու-
թեան զլրատոր պարագլուխն է,
Ենթկրտ իշխանին հետ տեսակ-
ցութիւն ունենալով հարցոց այս
վերջնոյն թէ պիտի գործադրէ
Պ. Սֆաքիաքանէսի ծրարիւրը:

Իշխանը պատասխանեց թէ պե-
տութեանց որոշումը կը ստիպէր
զինքը անմիջապէս ազգային ժո-
ղով դուրսել, երկրին օ-
րէնսդրութիւնը գծելու համար:

Նոր ընտրութեան չի ձեռնար-
կելու համար, իշխանը, իւրա-
քանչիւր գաւառի պատուիրակը
պիտի հրաւիրէ վեցական անձեր
նշանակել, որոնք ամիսէ մը
Քանէի մէջ զուամրտելով 18
յօդուածէ բաղկացած կանոնա-
գիր մը պիտի պատրաստեն:

Այս առաջին օրէնսդրութեան
հիման վրայ, իշխանը նոյն իսկ
իր նախաձեռնութեամբ Վարչու-
թիւն մը պիտի կազմէ և վերջէն
կանոնաւոր ազգ. ժողով մը պիտի
զուամրտէ 132 երեսփոխանէ բաղ-
կացած, որոնցմէ 30ը մահմետա-
կան: Այս ժողովն է որ նախնա-
կան օրէնսդրութիւնը պիտի վա-
ւերացնէ կամ բարեփոխէ:

Պ. Քուստուրազիս պատասխա-
նեց թէ այս ծրարիւրը բոլոր քա-
ղաքական անձնւորութիւնները
պիտի գոհացնէ:

«Սթանտարտի Քանէի թըղ-
թակիցն ալ տեսակցութիւն մը
ունեցիւր է իշխանին հետ, որ
յայտարարեւ է թէ ինք ու է
կուսակցութեան չի պիտի պատ-
կանի:

«Նա ամբողջ կրկէն ընդարձակ
զօրանոցի մը պիտի վերածեմ,
եթէ հարկ ըլլայ, յարիւր է իշ-
խանը, բայց կը փափագիմ որ ա-
մէն որ արդարութեան մէջ սպ-
րիտ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պահրէէն Լ'Առմէնիոն կը
զրին թէ Միթհատ պէյ, համ-
բանաւոր քրիստոնէական պէյին
որդին գաղթեցուցեր է իր Քիւր-
տիսթան անուն թերթին հրա-
տարակութիւնը: Կը հաւաստեն
թէ Միթհատ պէյ իր թերթը
հիմնած էր այն պատճառով որ
զժգոհ էր Սուլթանին տուած
2,500 զրշ. ամսաթոշակէն, բայց
հիմա ամսական հազար զրշ. ի
յաւելում եղեր է այդ գումարին
վրայ, ալ պատճառ մը չունէր
Քիւրտիսթանը յարաւեւելու:

—Ալ—Րայա լրագիրը կը գրէ
թէ Միթհատին կը պատրաս-
տուին իրենց անկախութիւնը պա-
հանջելու, թուրքին շարքի,
վայրագութեանց և անիրաւու-
թիւններու դրութիւնը չի կըր-
նար հանդուրժելի ըլլալ աւելի
երկար ստեն:

—Սթանտարտի Պուլկարի
կը կը ծառայանէ թէ գեր-
մանացի դրամատէրներ կը ջա-
նան Սիբիոյ և Պաղեստինի մէջ
ընդաձակ հոգեր գնել, գերման
երկրագործական գաղթականու-
թիւն մը հաստատելու համար:

—Կոմս Սուրազիվի առաջար-
կին վրայ, Չարը արտօնեւ է որ
Պապը յատուկ գեոսպան մը ունե-
նայ Բէթերսպուրկի մէջ:

—Ամերիկեան զօրախումբ մը
զօրավար Միլէի հրամատարու-
թեամբ նախընթաց չորեքշաբթի
Հօլլիօ (Ֆիլիպեան կղզիներէն)
գնաց. Սպանիացիները արդէն
հեռացած ըլլալով, ամերիկա-
ցիները քաղաքը գրաւեցին և
իսկոյն անոր վարչութիւնը կազ-
մակերպելու ձեռնարկեցին: Հա-
րատութիւնը կատարեալ է:
Միայն, 5 ընկիւնը հրացանի
բռնուեցան, զիչեր ժամանակ
աւազակութիւններ զործած ըլ-
լալու համար: Գերմանական ի-
րեն զրահաւորէն զատ, ուրիշ օ-
տար նա չիկայ նաւահանգիստին
մէջ:

ՊՕՐՍԱ

Վառնա 19 Դեկտեմբեր

ՊՈՒՂՏԱՅ
Վազօն, լրագրա 55—58, հէքթօլ.
9.20—10 ֆրանք
Արապա, լրագրա 55—60 հէքթօլ.
9—12 ֆրանք

ԱՐԲԱ
Լրագրա 42—50 հէքթօլ. 6.40—6.80
ֆրանք

ՄԻՍԻՐ
Վազօն, 55—57 լրագրա, 6.20—6.50
Սոսպա, 55—60 լրագրա, 6.40—6.80
Կիւնկէ 15—20 Վազօն, 25—30 տոսպա
Կէլմէքաէ տիր:

ՆԱՐԸ
Կիւնկէ 12 արապա կէլմէքաէ տիր.
58—60 լրագրա, 5.80—6 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵՍ
Կիւնկէ 12 տոսպա կէլմէքաէ տիր.
100 օզգասը 18—22 ֆր. մալա կիօրկ:

Ատապա մուամբլիսի նարօլուն 21
ֆրանք հրատար իւէ տիր.

Կիւնկէ 8—10 Վազօն, 50—60
արապա պուղտայ, 10—15 արապա
արապ կէլմէքաէ տիր:

ՎԱՐՊՈ

ԵՐԿՈՒ ԱՆՐ

(ՉԱՅ ՅԵՂԱՆՈՒՅԱՌՆ ԿԵՍԵՒԻՆԷ)

)(Գին 1 Ֆրանց)

Մնացած սակաւաթիւ օրինակները
կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի
խմբագրատունը, Ֆիլիպէ՝ Տ. Անտոն
Կոչի մօտ, Ռուսլուք՝ Հայկ Մալախ-
եանի սրճարանը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տէր Ղեւնդ. Ք. Փափաղեանի
հայերէն—ռուսմաներէն տարե-
ցոյցը, պատկերազարդ և ճոխ
պարունակութեամբ, Գինն է
թղթակազմին 1 ֆր. լաթա-
կազմին 1.50 և փառակազմին
2 ֆր.:

Գիմել հեղինակին, Կալոց:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ



Եթէ կուզէք հարկել կօ-
շիկներ որոնք յիշուց վրայ
միացուեն ձեռի և կիսաց-
կունութեան կատարելու-
թիւն և ամանաւոր գինի չափաւոր
թիւն, առանց վարանելու գիմե-
ցէք Ստեփան Խօրասանճեանի, Մու-
սալա, բաղնիք փողոց, հաճի Հասան
Կֆէնալի օթէլին սակ. հաւատացէք
որ առիթին պիտի օգտուիք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Եր տպագրուին ամէն լեզուէ
այցեառան, հասցեատուն, նամա-
կաղլուխ, հարասանեկան հրաւի-
րադիր, մահալազ, ինչպէս նաև
պրօշիւններ:

Գիներն յոյժ գէլարամաշէլի:
Ուրիշ քաղաքներէ և կամ
յանձնարարութիւններ ճշդու-
թեամբ և փութով կը կատար-
ուին:

ՏՊԱՐԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ
Օ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ.Ս.ՈՒՍ.
Ներքոյ քաղ. Երեւան փողոց.
Սագալը Ձեռնի կից.
Կը տպագրուին հայերէն, պուլկարե-
րէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն,
և այլ լեզուներով այցեառան, հասցե-
ատուն, հարասանեկան հրաւրադիր, ազ-
գարտութիւն, նամակազարկ, պահա-
րան, մահալազ, վաճառականական ամէն
տեսակ գործեր, զիւրք, լրագիր, և այլն:
Գուճաւոր և ուկեզօժ զարգացուծե-
րու համար ամէն լեզուէ ճոխ ստեղծ և
մասնաւոր գործիքներ կը գտնուին:
ՄԵՆ ԵՆԱՄԲ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ
ԳԻՆԵՐԸ ՅՈՅԺ ԳԻՐԱՄԱՏՅԵԼԻ
Ուրիշ քաղաքներէ և կամ յանձնարար-
ութեամբ և փութով կը կատար-
ուին:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

Печанница „Взаимность“. Варна